Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**Դպրոց՝** Բազմաղբյուրի Ն.Սաֆարյանի անվան միջնակարգ դպրոց ՊՈԱԿ

**Առարկա՝** Մայրենի

**Թեմա՝** Գործնական աշխատանքների կազմակերպումը մայրենիի դասերին

**Վերապատրաստող մենթոր՝** Նարինե Մեսրոպյան

**Ուսուցիչ՝** Ամալյա Գրիգորյան

**Աշտարակ 2023**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……3
Գործնական աշխատանքների հիմնական նպատակներն ու խնդիրները…….5
Տարրական դասարաններում «Մայրենի» առարկայից կազմակերպվող գործնական աշխատանքների բովանդակությունն ու մեթոդները .....6
Գործնական աշխատանքներն արդյունավետ իրականացնելու համար ուսուցիչը պետք է… ……..7
Գործնական աշխատանքների տեսակները մայրենիից …….8
Գործնական աշխատանքների դասակարգումը ……9
Գործնական աշխատանքներն առաջին դասարանում ……11
Գործնական աշխատանքները մայրենիից երկրորդից չորրորդ դասարաններում ……..13
Գործնական աշխատանքների օրինակներ ……..15
Եզրակացություն …….21
Գրականության ցանկ ……22

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2000-ական թվականներից սկիզբ առած կրթական բարեփոխումների ալիքը, ի թիվս այլ նորարարությունների, առաջադրեց աշակերտների ձեռք բերած գիտելիքները գործնականում կիրառելու կարողությունների ու հմտությունների ձևավորման ու զարգացման կարևոր պահանջ: Այն, որ գիտելիքը չի կարող ինքնանպատակ լինել, գիտենք բոլորս, բայց ավանդաբար (թե՞ հարկադրված) դրա գործնական կիրառման փորձառությունը թողնում ենք կյանքին:

«Այս գիտելիքը ձեզ շատ պետք կգա կյանքում», - ժամանակին լսել ենք մեր ուսուցիչներից և ինքներս էլ հաճախ ասել մեր աշակերտներին: Հիմա փոխվել է վերաբերմունքը կրթության նկատմամբ, հետևաբար փոխվել են նաև կրթությանն առաջադրվող պահանջները:

Տարրական դասարանի աշակերտը պետք է կարողանա հաղորդակցվել հայերենով, ընկալել ուրիշների խոսքը, արտահայտել սեփական մտքերը, կարդալ և հասկանալ գրավոր պարզ տեքստեր: Ինքնակազմակերպվելու և ինքնուրույն գործունեություն ծավալելու, անձնական գործերը պլանավորելու և իրականացնելու պահանջը նույնպես առաջադրվում է տարրական դպրոցի երեխային: Միաժամանակ նա պետք է տիրապետի սովորելու հիմնական հմտություններին, դրսևորի կամք և վստահություն սեփական ուժերի հանդեպ, լինի նախաձեռնող, կարողանա աշխատել համագործակցված, հանդես գա որպես թիմի անդամ, ունենա համակարգչային տարրական գրագիտություն, ճիշտ գնահատի իր հնարավորությունները, գիտակցի և արժևորի իր ազգային ինքնությունը, հարգի և ընդունի ընտանեկան ու հասարակական կյանքի արժեքները, ձևավորի օμ յեկտիվ ինքնագնահատական, դրսևորի աշխարհաճանաչողության գործուն և առողջ հետաքրքրասիրություն:

ՀՀ կրթության պետական չափորոշչային այս պահանջների մեծ մասն իրականացնելու ուղիղ ճանապարհը՝ գործնական աշխատանքների կազմակերպումն է:Տարիների աշխատանքային փորձով համոզվել ենք, որ գոյություն ունի անմիջական կապ կրթության բովանդակային երեք բաղադրիչների (գիտելիք, կարողություն-հմտություն, արժեքային համակարգ) միջև:

Գործնական աշխատանքները նպաստում են խորացնելու կրտսեր դպրոցականների գիտելիքները,զարգացնում նրանց ճանանչողական ակտիվությունը:Պատկերավոր ասած՝ մեզ շրջապատող աշխարհը ստեղծագործական լաբարատորիա է,որտեղ ընթանում է ճանաչողական գործընթացը:

Աշակերտների գործնական աշխատանքը մայրենիից մի ոլորտ է,որտեղ շաղկապվում են գիտելիքն ու կարողությունը,տեսությունն ու պրակտիկան: Ուստի,աշակերտներին պետք է հասանելի դարձնել այն,որ տեսական հետազոտությունները կատարվում են ոչ միայն

հանուն գիտության,այլև հանուն պրակտիկ գործունեության զարգացման ,հանուն մարդկանց կենսապայմանների ապահովման և բարելավման:Աշակերտին պետք է հասանելի դարձնել տեսական հասկացությունների իմացության կարևորությունն ու նշանակությունը մարդու պրակտիկ գործունեության մեջ:Նա պետք է հասկանա,թե որքան կարևոր է ձեռք բերած տեսական գիտելիքները կյանքում հանդիպող առօրյա իրադրություններում կիրառել կարողանալը:

## ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- ձևավորել և զարգացնել սոցիալական հմտություններ,
- մատուցել կիրառման համար անհրաժեշտ տեսական և գործնական նյութ,
- նպաստել անհատի ինքնադրսևորմանը,կենսագործունեությանը և կրթության շարունակականության ապահովմանն ուղղված հմտությունների զարգացմանը:

# Տարրական դասարաններում «Մայրենի» առարկայից կազմակերպվող գործնական աշխատանքների բովանդակությունն ու մեթոդները

Գործնական առաջադրանքները միշտ էլ (հիմա՝ առավել) եղել են յուրաքանչյուր դասի կարևոր բաղադրիչներից մեկը և արդյունավետության հիմնական ցուցիչը: Ուստի անհրաժեշտ է, որ դրանք լինեն նպատակային, բազմաբնույթ ու բազմաբովանդակ: Տարիներ շարունակ ուսումնական գործընթացի գլխավոր շեշտադրումը կատարվել է սովորողներին տեսական գիտելիքների մեծ պաշար հաղորդելու փաստի վրա: Մինչդեռ այժմ սովորածը գործնականում կիրառելուց զատ կարևորվում է ուսուցման գործնական եղանակը: Աշակերտները սովորում են գործելով, ինչ-որ բան փորձարկելով, այսինքն՝ ուսումնական գործողությունների և վարժությունների կատարման արդյունքում :
Գործնական աշխատանքը սովորողների կողմից կատարվող այն աշխատանքն է ,որը վերաբերվում է նրա կողմից ձեռք բերված գիտելիքների,կարողությունների և հմտությունների գործնական կիրառություններին:
Գործնական աշխատանքների ընթացքում պետք է իրականացվեն այնպիսի գործողություններ, ինչպիսիք են գիտելիքների որոնումը,դրանց իմաստավորումը,ամրապնդումը,կարողությունների և հմտությունների ձևավորումը և զարգացումը,գիտելիքների ընդհանրացումը և համակարգումը:
Գործնական աշխատանքների սահմանները շատ ընդարձակ են և իրենց մեջ ներառում են նաև աշակերտների կողմից կատարվող հետազոտական աշխատանքներն ու նախագծային գործունեությու-նը:Գործնական աշխատանքը անցկացվում է և ստուգման,և ուսուցանող նպատակով: Հանրակրթության դերը մեծ մասամբ պայմանավորված է նրա գործնական- կիրառական նշանակությամբ:Ժամանակակից պայմաններում ուսուցման կարևոր նպատակներից է աշակերտին սովորեցնել ձեռք բերած գիտելիքներն ու կարողությունները կիրառել կյանքում հանդիպող տարբեր գործնական խնդիրներ լուծելիս:
Գործնական անվանենք սովորողների կողմից կատարվող այն աշխատանքները,որոնք վերաբերվում են նրանց ձեռք բերած գիտելիքներիկարողությունների և հմտությունների գործնական կիրառություններին/ենթադրվում է նաև չափիչ սարքերի կամ համակարգչի կիրառություն/:

## ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՈՒՍՈՒՑԻՉԸ ՊԵՏՔ Է՝

• նախապատրաստական աշխատանք տանի աշակերտների հետ,որպեսզի նրանք ոչ միայն իմանան տեսական այն նյութը որի հիման վրա պետք է կատարեն գործնական աշխատանքը,այլև ծանոթ լինեն այն իրականացնելու հնարներին և միջոցներին,
• ապահովի աշակերտներինգործնական աշխատանքն իրականացնելու համարանհրաժեշտ միջոցներով/ուսումնական օժանդակ նյութ, մոդելներ, գործիքներ,սարքեր նայլն/
• վերահսկի աշխատանքի կատարման ընթացքը,անհրաժեշտության դեպքում ինքը ևս ներգրավվի այդ աշխատանքում,
• վերլուծի և գնահատի կատարված աշխատանքը:

*Գործնական աշխատանքները լինում են՝ անհատական և խմբային:*
*Գործնական աշխատանքները կատարվում են դասարանում, տանը և համայնքում:*
*Արդյունքները կարող են ներկայացվել բանավոր և գրավոր: Ըստ անցկացման ժամանակի լինում են՝ կարճատև և երկարատև: Ըստ թեմայի լինում է՝ առարկայական և ազատ:*
*Գործնական աշխատանքը կարող է գնահատվել ինչպես միավորային,այնպես է ոչ միավորային ձևերով:*
*Դասը պլանավորելիս հմուտ ուսուցիչը երկու կարգի գործունեություն է նախատեսում.*

*1. Ուսուցողական-հետազոտական. այդ ընթացքում աշակերտները հնարավորություն են ստանում սեփական փորձառությամբ կառուցելու («հայտնագործել») գիտելիքը:*

*2. Ամփոփիչ, երբ աշակերտները, կիրառելով իրենց սովորածը, կոնկրետ առաջադրանք են կատարում, զարգացնում իրենց կարողությունները, հմտանում գործնական աշխատանքի շնորհիվ:*

## ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ՄԱՅՐԵՆԻԻՑ

Սովորողներին ներկայացվող չափորոշչային և ծրագրային պահանջների համաձայն՝մայրենիից նախատեսվում են տարբեր բնույթի ու տիպի գործնական աշխատանքներ.

• պատմության գծապատկերի կազմում՝ նախադասությունների համար գույնային բաժանումներով,
• բառերի,վանկերի կազմության գծապատկերներ,
• դասանյութի մասերին համապատասխան բովանդակային կառուցվածքի գծակարգ,
• տեքստի սխալների ուղղում, խառնված հերթականության շտկում,
• գործնական գրություններ՝ նամակ, հասցե,հայտարարություն,
• գովազդային վահանակ,դասարանական թերթի ստեղծում և ձևավորելու աշխատանքներ,
• տեքստի նկարազարդում,
• հեքիաթների հորինում,ինքնաշեն գրքերի նկարազարդում,
• զանազան տեղեկատվական աղբյուրներից/ բառարաններ, մանկական հանրագիտարաններ, ուսումնական ձեռնարկներ/որոնել,գտնել տեղեկություններ առաջադրված հարցերին պատասխանելու համար (նախագծերի մեթոդ):
•պաստառի ձևավորումը,
•տեսահոլովակ ինկարահանումը, դիտումը,քննարկումը,
•երգի միջոցով ուսումնառությունը,
•դերախաղը,փորձը,
• քարտեզների ուսումնասիրումը և ստեղծումը,
• հետազոտական աշխատանքը,նախագիծը,դեպքերի ուսումնասիրությունը,
• բանավեճը,էքսկուրսիաները,
• սահիկաշարի պատրաստումը:

# ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Գործնական աշխատանքների դասակարգման հիմքում դրվում է սովորողի գործունեության ձևը, և ըստ այդմ գործնական աշխատանքները բաժանվում են 3 խմբի՝

- վերարտադրողական, որոնք հնարավորություն են տալիս ցուցադրելու՝ ինչ է սովորել և ինչ է կարողանում անել սովորողը (օրինակ՝ քարտեզի վրա ցույց տալ քաղաքներ, գետեր, լճեր և այլն),
- մասամբ որոնողական, երբ սովորողը պետք է ոչ միայն ցույց տա՝ ինչ է սովորել և ինչ է կարողանում, այլև կատարի լրացումներ, լուծի իրեն առաջադրված խնդիրը (օրինակ՝ տրված տեղանունները, գետերը, լճերը և այլն պայմանական նշաններով պատկերել քարտեզի վրա),
- ստեղծագործական, երբ սովորողը ինքը պետք է ինքնուրույն կամ խմբի անդամների հետ լուծում գտնի առաջադրված խնդրի համար՝ ցուցադրելով կարողունակությունների զարգացման որոշակի մակարդակ (օրինակ՝ կազմել տեղանքի քարտեզը, ինչի համար սովորողը պետք է դրսևորի ոչ միայն մեկ, այլ մի քանի առարկաների, այլև վերառարկայական հմտություններ):

Վերոնշյալից արդեն պարզ է դառնում, որ գործնական աշխատանքները բազմազան են՝ պաստառի ձևավորումից մինչև էքսկուրսիայի ընթացքում տեսածի ու լսածի ներկայացում աղյուսակի, ֆիլմի, ակնարկի տեսքով, երգի հորինումից մինչև նախագծի իրականացում, արդյունքների ներկայացում ու կիրառում:
Նշված գործնական աշխատանքները կարող են իրականացվել ինչպես անհատապես, այնպես էլ խմբային աշխատանքի շրջանակում, դպրոցում, տանը կամ այլ վայրում, գնահատվել միավորով կամ բառային բնութագրումներով: Արդյունքները կարող են ներկայացվել սովորողի կամ սովորողների խմբի ընտրությամբ՝ նպատակից ելնելով: Որպես գործնական աշխատանքի տեսակ ներկայացնենք դերակյին խաղը, որն ունի կիրառման լայն հնարավորություններ և հաճախություն ուսումնական տարբեր առարկաների շրջանակում: Սակայն պետք է անկեղծորեն նշել, որ դերային խաղը ոչ միշտ է կիրառվում նպատակային, կամ որ ավելի ճիշտ կլինի ասել՝ ոչ միշտ է լիարժեքորեն իրացվում դերային խաղի ներուժը: Այն իրականում շատ ավելի լուրջ ու լայն հնարավորություններ է տալիս յուրաքանչյուր սովորողի իմացական և հուզակամային որակների զարգացման, քննադատական մտածողության, իրավիճակում կողմնորոշվելու, ինքնարտահայտվելու և ինքնադրսևորվելու համար:

Պետք է իրավամբ նշել, որ դերային խաղն իր մեջ ամփոփում է գործնական աշխատանքների բոլոր 3՝ վերարտադրողական, որոնողական և ստեղծագործական տեսակների տարրեր: Դերային խաղին պետք է վերաբերվել ոչ թե ժամանցի, այլ գործնական բազմափուլ աշխաանքի, որի յուրաքանչյուր փուլ լուծում է կոնկրետ նպատակներ: Հետևաբար, անհրաժեշտ է հանգամանորեն պլանավորել դերային խաղը՝ նախապես սահմանելով նպատակ, ձևակերպելով չափելի վերջնարդյունքներ:

## ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ

Դպրոցական ուսումնառության հենց առաջին օրերից սկսած՝կարևոր է,որ երեխան դառնա ուսումնական գործընթացի ակտիվ մասնակիցը:Որպես կանոն՝ուսման նկատմամբ անտարբեր երեխաները սովորում են շատ ավելի վատ,քան կարող են,և,հակառակը,հետաքրքրասեր,հարցասեր երեխաները սովորում են շատ ավելի հեշտ և արագորեն են յուրացնում գիտելիքները:

Սա է պատճառը,որ երեխայի գործնական աշխատանք կատարելուն նախապատրաստելը ,նրան համապատասխան կարողություններև հմտություններ ուսուցանելը առաջին դասարանում դասավանդող ուսուցչի կարևորագույն խնդիրն է:ՈՒսուցչի աշխատանքը պետք է նպատակաուղղված լինի սովորողների գործնական կարողությունների զարգացմանը՝որպես ճանաչողական հետաքրքրության զարգացմանը և ուսումնական գործունեության նկատմամբ դրդապատճառների ստեղծման միջոց:

Այդ նպատակաուղղված աշխատանքի ընթացքում լուծվում են հետևյալ խնդիրները.

•ճանաչողական գործընթացների զարգացում(երևակայություն,ընկալում,հիշողություն),մտածական գործընթացների զարգացում(համեմատում,վերլուծություն և գլխավորի առանձնացում,նյութի ամփոփում և համակարգում,հակասությունները տեսնելու կարողություն և այլն),

•հետազոտական կարողությունների ձևավորում և զարգացում.տեսնել անսովորը,ձևակերպել խնդիրը,ապացուցել գազափարը,ձևավորել հետազոտական աշխատանքի արդյունքները, •ինքնակրթության կարողությունների ձևավորում,այսինքն՝ակտիվ ճանաչողական գործունեության հնարների ձևավորում,

•սովորողների գրավոր և բանավոր խոսքի զարգացում,

•համագործակցային և հաղորդակցական կարողությունների զարգացում,

Առաջին դասարանը գործնական կարողությունների զարգացման առաջին փուլն է: Գործնական աշխատանքն այս դասարանում կրում է սոսկ ուսոցող բնույթ:Այս փուլում աշխատանքը հիմնականում նպատակաուղղված է երևակայության, ստեղծագործական մտածողության,դիտարկման,հարցեր տալու կարողությունների զարգացմանը,որն էլ իր հերթին նպաստում է գործնական կարողությունների զարգացմանը: Հնարավոր չէ ձևավորել գործնական կարողություններ առանց երեխաների երևակայության և ստեղծագործական մտածողության զարգացման,որովհետև երևակայությունը կերպարի կամ գաղափարի ձևով նորի ստեղծման հոգեկան գործընթաց է: Հատկապես այդ գործընթացն է մարդուն դուրս բերում իրականության սահմաններից և հնարավորություն է ընձեռում կողմնորոշվելու տարբեր իրավիճակներում՝ կանխատեսելու արդյունքները:

Ահա որոշ վարժություններ, որոնք նպաստում են երևակայության և ստեղծագործական կարողությունների զարգացմանը:

Վարժությունների մի խումբը նպաստում է սեփական կարծիքը փոխելու, իրերն ու երևույթները տարբեր տեսանկյուններից դիտարկելու կարողությունների զարգացմանը,ինչն էլ,իր հերթին,գործնական աշխատանքն արդյունավետ կատարելու հնարավորություն է ընձեռում:
Կարելի է հանձնարարել հետևյալ առաջադրանքներով վարժությունները.
• շարունակի՛ր անավարտ պատմվածքը,հեքիաթը,
• հորինի՛ր պատմվածք որևէ հերոսի անունից,«Չարի վերջ»_Կկու
• նկարագրի՛ր քո երևակայական կյանքի մեկ օրը կամ օգտագործելով հետևյալ վերջաբանը՝«և նապաստակը մուշ-մուշ քնեց արջի թաթերի մեջ», հորինի՛ր պատմվածք,
• որոշի՛ր,թե որքան գործողություններ կարելի է կատարել որևէ առարկայի հետ,
•որևէ առարկայի համար անվանի՛ր որքան հնարավոր է շատ հատկանիշներ,
•եկեք միասին մտածենք,թե ինչու ամռանը սարերի վրայի ձյունը չի հալվում,
•ինչո՞ւ են երեխաները սիրում խաղալ համակարգչային խաղեր,
Կատարելով ենթադրություններ՝ երեխաները պետք է սովորաբար իրենց խոսքում կիրառեն հետևյալ բառերը.*ենթադրենք,ասենք թե,հնարավոր է,կարող է լինել*: Կարևոր կարողություն է նաև հարցեր առաջ քաշելու կարողությունը: Չէ՞ որ յուրաքանչյուր ճանաչողական գործընթաց սկսվում է հարցադրումներից:Այդ նպատակով տրվում են մարդկանց,կենդանիների պատկերներով նկարներ,և երեխաներին առաջարկվում է պատասխանել տրված հարցերին:Կամ տրվում է առաջադրանք.
•Ի՞նչ հարցեր կօգնեն քեզ նոր տեղեկություններ իմանալու տրված առարկայի մասին:
Գործնական վարժությունները ճանաչողական- հետազոտական և ստեղծագործական գործընթացների սկիզբն են: Գործական առաջադրանքներն իրենց մեջ ներառում են ճանաչողական գործընթացներ՝սկսելով ընկալման,մտապահման,իմաստավորման գործողություններից և ավարտելով տրամաբանական ու ստեղծագործական գործընթացներով:
Առաջին դասարանից սկսած անհրաժեշտ է սովորողներին վարժեցնել հետազոտական գործունեության հետևյալ ձևերին.
• մտածել ինքնուրույն,
• հարցենել մեկ ուրիշից,
• կարդալ գրքերում,
• դիտել հեռուստացույց,
• տեղեկություն ստանալ համացանցից ,
• դիտարկումներ կատարել,
• փորձեր անցկացնել,
• հարցնել համապատասխան մասնագետներից:

# ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՄԱՅՐԵՆԻԻՑ ԵՐԿՐՈՐԴԻՑ ՉՈՐՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Երկրորդ դասարանից սկսած՝ արդեն կարելի է առաջադրել գործնական աշխատանքներ,որոնք կառուցված կլինեն մի շարք գործնական վարժություններից:Գործնական աշխատանքը ենթադրում է այնպիսի աշխատանք,որի կատարման ընթացքում աշակերտը հայտնվում է իր համար ոչ սովորական իրավիճակում,որտեղ անհրաժեշտը է հնարամտություն,ստեղծագործական մոտեցում,որպեսզի լուծի իր առջև դրված խնդիրը:Ընդ որում՝գործնական աշխատանքը պետք է կազմված լինի այնպիսի աշխատանք,որի ընթացքում աշակերտը հայտնվում է իր համար ոչ սովորական իրավիճակում, որտեղ անհրաժեշտ է հնարամտություն,ստեղծագործական մոտեցում,որպեսզի լուծի իր առջև դրված խնդիրը:Ընդ որում՝ գործնական աշխատանքը պետք է կազմված լինի այնպիսի առաջադրանքներից,որոնք հնարավոր չէ կատարել առանց ուսումնական նյութի լավ իմացության: Այսինքն՝գործնական աշխատանքը ուսումնական գործընթացում յուրացված գիտելիքների,կարողությունների և հմտությունների կիրառումն է:
Գործնական աշխատանքը ենթադրում է նախաձեռություն ցուցաբերելու ցանկություն, կարողություն և հնարավորություն,ոչ ստանդարտ մտածողություն,ստեղծագործական մտածողություն, ինքնուրույն որոշում կայացնելու, անհրաժեշտ տեղեկատվություն որոնելու պարտականություն:
Այս դասարաններում գործնական աշխատանքները նպաստում են ոչ միայն յուրացրած գիտելիքների գործնական կիրառման կարողությունների զարգացմանը,այլև դպրոցականների այնպիսի մտածողական գործընթացների զարգացմանը,ինչպիսիք են՝
1.դասակարգումը,
2.ամփոփումը,
3.տարբեր հնարավոր որոշումների ընտրությունը,
4. իր աշխատանքի գործողությունների ծրագրի կազմումը,
5.միևնույն իրը կամ երևույթը տարբեր տեսանկյուններից դիտարկումը,
6.տարբեր իրերի կամ երևույթների համեմատումը,
7. ինքնաստուգումը:
Գործնական աշխատանքների արդյունավետ իրականացումը կախված է մտածողության այս գործընթացների ճշգրիտ կազմակերպումից:
Գործնական աշխատանքների կատարման ընթացքում անհրաժեշտ է պահպանել հետևյալ կանոնները.
1.Ցանկացած գործնական աշխատանք պետք է ունենա կոնկրետ նպատակ:
2.Գործնական աշխատանքի ընթացքում երեխաները պետք է կարողանան կիրառել իրենց՝մինչև այդ յուրացրած գիտելիքներն ու կարողությունները:

3.Յուրաքանչյուր աշակերտ պետք է իմանա կատարման ընթացքը և պետք է յուրացնի ինքնուրույն գործելու հնարքները:
4.Գործնական աշխատանքը պետք է համապատասխանի սովորողների կարողություններին:
5. Գործնական աշխատանքի ընթացքում ստացած արդյունքները կամ եզրահանգումները պետք է կիրառվեն ուսումնական գործընթացում:
6.Անհրաժեշտ է ապահովել տարբեր տեսակի գործնական վարժությունների համադրումը:
7.Գործնական աշխատանքի բովանդակությունն ու քայլաշարը պետք է հետաքրքրություն առաջացնեն:
8.Գործնական աշխատանքը պետք է ապահովի սովորողների ճանաչողական տրամաբանական կարողությունների զարգացումը:
9.Գործնական աշխատանքի բոլոր տեսակները պետք է ապահովեն ինքնուրույն ճանաչողական գործնեություն ծավալելու կարողությունը:

*Երկրորդից չորրորդ դասարաններում, բացի ուսուցանող նպատակով տրված գործնական աշխատանքներից, տրվում են նաև միավորայի գնահատմամբ գործնական աշխատանքներ(յուրաքանչյուր կիսամյակում մեկ գործնական աշխատանք): Այդ գործնական աշխատանքների գնահատումն իրականացվում է՝ աշակերտի հավաքած միավորների քանակն արտահայտելով 10- միավորային գնահատանիշերով: Կրտսեր դպրոցականներին մայրենիից տրվող գործնական աշխատանքները մեծ հաշվով կարելի է անվանել ստեղծագործական- հետազոտական աշխատանքներ:*

## Գործնական աշխատանք խմբով

**Առարկան՝** Մայրենի 2
**Թեման՝** «Իմ սիրելի կենդանին»
Աշխատանքի ձևը՝ փոքրիկ պաստառ կամ 2-3 էջանոց գրքույկ

**Նպատակը՝**
• Զարգացնել միմյանց հետ համագործակցելու կարողություններ:

• Սովորեցնել տեղեկատվությունը համակարգել, առանձնացնել կարևորն ու արժեքավորը:

• Մշակել նախագծային աշխատանքներ կատարելու կարողություններ:

**Ընթացքը՝**
**1.** Խմբերին տրամադրել համապատասխան նյութեր՝

• Տեղեկատվություն և նկարներ կենդանիների մասին /դրանք հավաքվում են թեմայի ընթացքում աշակերտների միջոցով/,
•Բառարան /անհրաժեշտության դեպքում անծանոթ բառերի բացատրության համար/,
• Գունավոր թղթեր, սոսինձ, մկրատ, գունավոր գրիչներ, պաստառ
• Գեղարվեստական ստեղծագործություններ կենդանիների մասին / բանաստեղծություններ, հանելուկներ՝ դրանք նույնպես հավաքվում են թեմայի ընթացքում աշակերտների միջոցով, սակայն ուսուցիչը ևս պետք է ունենա համապատասխան նյութերի հավաքածուներ/,
• Գիտելիքների շտեմարաններ, մանկական հանրագիտարաններ և այլ գիտահանրամատչելի գրականութուն երեխաների տարիքին համապատասխան:
**2.** Աշխատանքների կատարման քայլաշար՝ հրահանգների քարտ՝
Ընտրել կենդանուն,

• Տեսակավորել նյութերը, նկարները, գեղարվեստական ստեղծագործությունները,

• Որոշել աշխատանքի ձևը՝ պաստառ կամ գրքույկ,

• Խմբում կատարել աշխատանքի բաժանում /այստեղ հնարավոր է ուսուցչի միջամտությունը/:

**3.** Բուն աշխատանքը՝

- Ձևավորել գրքույկի կազմը կամ պաստառի վերնագիրը,
- Կենսագրական բանաստեղծություն.
- անունը / այլ անվանում/,
- տեսակը,
- բնորոշ արտաքին առանձնահատկությունն
- բնավորության առանձնահատկություններ,
- որտեղ և ինչպիսի պայմաններում է ապրում,
- ինչով է սնվում,
- քանի ձագ է ունենում և ինչպես է խնամում ձագերին:
- Ներկայացնել հանելուկներ և բանաստեղծություններ,
- Հորինել հանելուկ կամ քառատող կենդանու մասին,
- Վերջին մասում գրել աշխատանքը կազմողների անունները:

**Ծանոթություն՝** 2-րդ դասարանում նման աշխատանքների կարելի է մասնակից դարձնել նաև ծնողների /յուրաքանչյուր խմբում մեկ ծնող/: Թեմայի դասանյութերի դասավանդման ընթացքում պարբերաբար պետք է հանձնարարել լրացուցիչ փոքրիկ հանձնարարություններ, որոնք հիմք կհանդիսանան նման գործնական աշխատանքներ անցկացնելու համար/:
Նման ձևով կարելի է կազմակերպել նաև գործնական աշխատանքներ «Իմ սիրելի թռչունը»,« Իմ սիրելի ծաղիկը» թեմաներով:

## Գործնական աշխատանք / 2-րդ դասարան

**1. Գրի՛ր կենդանիների անունները: /5 միավոր/**

_____ _____ _____



_____ _____

**2. Գրի՛ր յուրաքանչյուր կենդանուն նկարագրող մեկ հատկանիշ ցույց տվող բառ: /5 միավոր/**

_____ _____ _____

_____ _____

**3. Այդ բառերով և կենդանիների անուններով կազմի՛ր բառակապակցություններ և գրի՛ր: /5 միավոր/**

_____

_____

_____

**4. Գրի՛ր ձագերի անունները: /5 միավոր/**

ձի _____
գայլ _____
այծ _____
կով _____
ոչխար _____

**5.Ինչպե՞ս են անվանում կենդանիոերի հետևյալ խմբերին : /5 միավոր/**

ձիերի խումբ_____
գայլերի խումբ _____
այծերի խումբ _____
կովերի խումբ _____
ոչխարների խումբ _____

Գործնական աշխատանք / 2-րդ դասարան

1. Գրի՛ր թռչունների անունները: /5 միավոր/

_____ _____ _____

_____ _____

**2.** Գրի՛ր յուրաքանչյուր թռչունին նկարագրող մեկ հատկանիշ ցույց տվող բառ: /5 միավոր/

_____ _____ _____

_____ _____

**3.** Այդ բառերով և թռչունների անուններով կազմի՛ր բառակապակցություններ և գրի՛ր: **/5** միավոր**/**

_____

_____

_____

**4.** Ինչպե՞ս են անվանում թռչունների խումբը: **/1** միավոր**/**

_____

**5.** Թռչուններից մեկի մասին կազմի՛ր փոքրիկ տեքստ և գրի՛ր: **/4** միավոր**/**

_____

_____

_____

_____

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, աշակերտները գործնական աշխատանքի ժամանակ ակտիվորեն համագործակցում են միմյանց հետ, նյութեր հավաքում, դասակարգում դրանք, համադրում, վերլուծում, համատեղ որոշում իրենց աշխատանքը ներկայացնելու եղանակները։
Փորձը ցույց է տալիս, որ աշխատանքը շահեկան է դառնում, երբ դրան մասնակցում են նաև ծնողները:
Ծնողներին մասնակից դարձնելով ամբողջ գործընթացին՝ մենք մի կողմից դրական վերաբերմունք ենք ձևավորում մեր ընդհանուր գործի նկատմամբ, մյուս կողմից՝ աշակերտների համար բարենպաստ պայմաններ ստեղծում տեխնիկական աջակցություն գտնելու հարցում (ներկեր, թղթեր, պաստառներ, օժանդակ այլ նյութեր ձեռք բերել, ցուցադրություն պատրաստել, դասասենյակը կամ սրահը ձևավորել և այլն:
Այսպիսով՝տարրական դասարաններում կիրառելով գործնական աշխատանք բաղադրիչը ձևավորում ենք այնպիսիկարողություններ և հմտություններ,որոնք վերառարկայական են և պետք են աշակերտին ողջ կյանքի ընթացքում:
Մասնավորապես՝սովորողները՝
•զարգացնում են իրենց աշխարհաճանաչողական գիտելիքները,
•ձեռք են բերում սոցիալական հմտություններ,
•իրենց աշխատանքներում դիտարկում են տեսականի և գործնականի կապը,
•ինքնադրսևորվում են, ինքնակազմակերպվում են,
•ուսուցանվող առարկան դառնում է նրանց համար ավելի հետաքրքիր,
•լինում են մոտիվացված,քանի որ ամեն ինչ անում են իրեց նախասիրությունների շրջանակում և ներգրավված են համընդհանուր ուսումնական գործունեության մեջ:

# ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան « Գործնական աշխատանքներ մայրենիից»,«Զանգակ» հրատարակչություն,2017թ.
2. Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան « 50 հարց ու պատասխան տարրական դասարանների ուսուցիչների համար»: Մաս I, «Զանգակ» հրատարակչություն, 2013թ:
3. Горностаева З.Я “Проблема самостаятельной познавательной деятельности”//Открыт. Школа – 1998 - №2
4. Բազմաբնույթ մտածողության տեսության կիրառումը ուսուցման վաղ շրջանում., Ձեռնարկ տարրական դպրոցի ուսուցիչների համար., Երևան 2001., էջ 12
5. Կ. Թորոսյան և ուրիշներ., Մայրենի 2-4., Ուսուցչի ձեռնարկ., Եր. 2007., էջ 27
6. https://kznakgnahatum.blogspot.com/2021/08/blog-post_80.html